Տեղեկացվում է ջերմատնային արտադրության թարմ պտուղբանջարեղենի և ծաղիկների արտահանման աջակցության միջոցառման մասին

որ ՀՀ կառավարության հունիսի 4-ի N 800-Լ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքից ջերմատնային արտադրության թարմ պտուղբանջարեղենի և ծաղիկների արտահանման աջակցության միջոցառումը, որի շրջանակներում նախատեսվում է սուբսիդավորել 2026 թվականի հունիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունից ջերմատնային ծագման ելակի, լոլիկի, պղպեղի և ծաղկի արտահանում իրականացրած տնտեսավարողներին:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության հունիսի 4-ի N 803 - Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշման մեջ կատարվել է լրացում և փոփոխություն, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրոպական միության անդամ հանդիսացող պետություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն և Կանադա «Արտահանում» կամ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով արտահանելու դեպքում ներմուծման երկրի օրենսդրությամբ տվյալ ապրանքի համար սահմանված մաքսատուրքի դրույքաչափով հաշվարկված գումարի չափով օժանդակություն ստացող՝ Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող ապրանքների ցանկում ներառվել է «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսության (տնտեսական գործունեության տեսակի դասակարգիչ՝ A) ՏԳՏԴ A 01.1 (բացառությամբ՝ ՏԳՏԴ A 01.11, ՏԳՏԴ A 01.12, ՏԳՏԴ A 01.14, ՏԳՏԴ A 01.15), ՏԳՏԴ A 01.2 խմբերի արտադրանքը (ապրանքը):